Զ/2647-25
25.12.2025թ.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի
գլխավոր քարտուղար
Կ. Մարգարյանին

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարիքների համար 2025 թվականի պետական բյուջեի 03 բաժնի 07 խմբի 01 դասի 1231 ծրագրի 11001 միջոցառման «վարչական ծառայություններ» 4231 հոդվածով նախատեսված բյուջեների կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարչական ակտի հիման վրա մատուցված ծառայությունների (թարգմանության ծառայություններ) ձեռքբերման նպատակով նախատեսվել է 25,5 մլն դրամ: Սակայն Կոմիտեում քննվող քրեական վարույթներով քրեական դատավարության լեզվին չտիրապետող, քրեական դատավարությանը մասնակցող անձանց համար պահանջված թարգմանչական ծառայությունների իրականացման նպատակով կատարված ծախսը 25.12.2025թ. դրությամբ կազմում է շուրջ 10,2 մլն դրամ: Հաշվի առնելով, քննիչների որոշման հիման վրա մինչև տարեվերջ նախատեսվող թարգմանությունները՝ մոտավոր հաշվարկներով սույն հոդվածով կպահանջվի ևս շուրջ 600,0 հազ. դրամ:

Միաժամանակ հիմք ընդունելով նյութատեխնիկական ապահովման, շահագործման և արխիվի բաժնի պետ Խ. Սահակյանի զեկուցագիրը՝ շերտավարագույր ձեռքբերելու համար անհրաժեշտ է 40,2 հազ. դրամ:

Տարեկան ֆինանսական վերլուծության արդյունքում պարզվեց, որ համապատասխան միջոցառման տնտեսագիտական դասակարգման «Կառավարչական ծառայություններ» 4235 հոդվածով և «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 4252 հոդվածով կան բավարար ազատ միջոցներ, որոնցից նպատակահարմար է կատարել վերաբաշխում արդեն իսկ կատարված և կատարվելիք թարգմանչական ծառայությունների և շերտավարագույրի ձեռքբերման ծախսերի դիմաց վճարումները կատարելու համար:

Առաջնորդվելով 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության N 2060–Ն որոշման 12-րդ հավելվածի 4-րդ և 7-րդ կետերով և հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ կատարել ներքին հոդվածային վերաբաշխում հետևյալ հոդվածների միջև.

«Կառավարչական ծառայություններ» 4235 հոդվածից նվազեցնել 8900,0 հազ. դրամ
«Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 4252 հոդվածից նվազեցնել 1300,0 հազ. դրամ
«Վարչական ծառայություններ» 4231 հոդվածին ավելացնել 10159.8 հազ. դրամ
«Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին ավելացնել 40.200 հազ. դրամ:

Հարգանքով՝
Ֆինանսաբյուջետային և հաշվապահական
հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝ **Գ. Բաբայան**

25.12.2025

X

Подписано: BABAYAN GAYANE 7208620300